

## Կանոնադրություն

### «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական

### մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի

### Ուսանողական խորհրդի

#### 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 ԳՊՄԻ-ի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԳՊՄԻ-ի ՈւԽ) ԳՊՄԻ-ի ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող բարձրագույն, ընտրովի մարմին է:
- 1.2 ԳՊՄԻ ՈւԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
- 1.3 ԳՊՄԻ ՈւԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԳՊՄԻ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 1.4 ԳՊՄԻ ՈւԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:
- 1.5 ԳՊՄԻ ՈւԽ-ի լրիվ անվանումն է. հայերեն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студентческий совет Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна, անգլերեն՝ Student Council of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan
- 1.6 ԳՊՄԻ ՈւԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Գյումրի, Պ. Սևակ 4, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ:

#### 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

#### ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 ԳՊՄԻ ՈւԽ-ի նպատակներն ու խնդիրները.
  - 2.1.1 պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
  - 2.1.2 իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,
  - 2.1.3 ապահովել ուսանողների մասնակցությունը ինստիտուտի կառավարմանը,
  - 2.1.4 ինստիտուտի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

- 2.1.5 մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
  - 2.1.6 միավորել ինստիտուտի ուսանողական կազմակերպությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը և այլ ուսանողներին վերաբորող հարցերով,
  - 2.1.7 աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- 2.2 ԳՊՄԻ ՈւԽ-ն իր գուծունեությունը ծավալում է՝ ելնելով վերը նշված նպատակներից ու խնդիրներից: Այն կարող է համագործակցել ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կարգավորելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:

### **3. Ուսանողական խորհրդի նախագահությունը**

- 3.1. Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ՈւԽ աշխատանքները ղեկավարում է ԳՊՄԻ ՈւԽ նախագահությունը
- 3.2. ՈւԽ նախագահության անդամներն ընտրվում են ֆակուլտետի պատվիրակների նիստում՝ բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Նախագահության կազմը հաստատվում է Համագումարի կողմից:
- 3.3. ՈւԽ նախագահության անդամ կարող են ընտրվել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները, ում վերջին երկու կիսամյակների միջին որակական գնահատականը (այսուհետ՝ ՄՈԳ) 71 և ավելի է: Առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- 3.4. Նախագահության անդամներն ընտրվում են ըստ ֆակուլտետներից՝ յուրաքանչյուր ֆակուլտետից 2 անդամ:
- 3.7 ՈւԽ նախագահությունը իր կազմից երկու տարի ժամկետով ընտրում է ՈւԽ նախագահ, փոխնախագահ, պատասխանատու քարտուղար:
- 3.8. ՈւԽ նախագահ չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանը անդամակցող թեկնածու:
- 3.9. ՈւԽ նախագահ կարող է դառնալ այն ուսանողը՝ ում վերջին երկու կիսամյակների ՄՈԳ-ը պակաս չէ 86-ից:
- 3.10. ՈւԽ նախագահի ընտրությունը կատարում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ

փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների պարզ մեծամասնությամբ:

**3.11.** ՈւՄ նախագահության անդամների կեսից ավելիի փոփոխության դեպքում կազմակերպվում ՈւՄ նախագահի նոր ընտրություն:

**3.12.** ՈւՄ նախագահը ընտրվելուց մեկ շաբաթ անց ՈւՄ նախագահությանը պետք է ներկայացնի ՈւՄ ղեկավարման համակարգը: ՈւՄ ղեկավարումը կարելի է իրականացնել կամ հանձնաժողովների միջոցով, կամ պատասխանատուների: ՈւՄ ղեկավար կազմը պետք է հաստատվի նախագահության կողմից:

**3.13.** Հանձնաժողովի նախագահների կամ պատասխանատուների թեկնածությունները առաջադրվում են ՈւՄ նախագահի կողմից՝ ինչը կարող է հաստատվել կամ մերժվել նախագահության կողմից:

**3.14.** Փոխնախագահի, պատասխանատու քարտուղարի թեկնածությունները առաջադրվում են նախագահության անդամների կազմից: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների պարզ մեծամասնությամբ:

**3.15** ԳՊՄԻ ՈւՄ նախագահը հանդիսանում է ԳՊՄԻ ՈւՄ նախագահության նախագահ, ներկայացնում է ՈւՄ-ն ԳՊՄԻ գիտական Խորհրդում, ռեկտորատում և այլ ինտիտուցիոնալ կառույցներում:

**3.16.** ԳՊՄԻ ՈւՄ նախագահը ՈւՄ Համագումարում հանդես է գալիս Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ:

**3.17.** ԳՊՄԻ ՈւՄ նախագահը ներկայացնում է ՈւՄ-ն ու ուսանողությունը բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, կազմակերպություններում՝ գործելով սույն կանոնադրությամբ ՈւՄ-ին վերապահված հարցերի շրջանակներում:

**3.18.** Սահմանված ժամկետը լրանալու կամ ԳՊՄԻ-ում ուսումն ավարտելու դեպքում ՈւՄ նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են ՈւՄ նախագահի նոր ընտրություններ:

**3.19.** ԳՊՄԻ ՈւՄ փոխնախագահը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորմամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները:

**3.20.** Պատասխանատու քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

**3.21.** ՈւՄ նախագահությունը՝

**3.21.1** Նիստեր է գումարում ամիսը առնվազն մեկ անգամ

- I. Միջոցներ է ձեռնարկում ՈւՄ Համագումարի որոշումներն իրականացնելու համար,
- II. Լսում է զեկուցումներ հանձնաժողովների, պատասխանատուների, ֆակուլտետային ՈւՄ-ների կատարած աշխատանքի մասին,
- III. Ընտրում է ԳՊՄԻ կառավարման մարմիններում սովորող անդամներին, ինչպես նաև որոշումներ է ընդունում կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներկայացուցիչներին առնչվող այլ հարցերի վերաբերյալ,

- IV. Կարող է անվստահություն հայտնել ՈւԽ նախագահին, նախագահության անդամներին և ֆակուլտետային նախագահներին:
- V. ԳՊՄԻ ՈւԽ նախագահության նիստը իրավագոր է, եթե ներկա են անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ
- VI. ԳՊՄԻ ՈւԽ նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 1/2-ի պահանջով կարող է հրավիրվել ԳՊՄԻ ՈւԽ նախագահության արտահերթ նիստ:

#### 4. ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

- 4.1. ԳՊՄԻ-ի ուսանողական ընկերության բարձրագույն մարմինը Համագումարն է: Համագումարին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են ֆակուլտետների պատվիրակները, ֆակուլտետային ՈւԽ-ների նախագահները, Ուսանողական գիտական ընկերության լիագոր ներկայացուցիչները:
- 4.2. ՈւԽ Համագումարը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ ՈւԽ նախագահության կողմից: Անհրաժեշտության դեպքում ՈւԽ նախագահությունը կարող է հրավիրել արտահերթ Համագումար: Արտահերթ Համագումար կարող է գումարվել նաև Համագումարի պատվիրակների 1/2-ի պահանջով:
- 4.3. ԳՊՄԻ-ի ՈւԽ-ի համագումարի պատվիրակների, ֆակուլտետային ՈւԽ-ների ընտրությունը կազմակերպվում է ԳՊՄԻ-ի ՈւԽ-ի ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ընտրական հանձնաժողովը):
- 4.4. Համագումարի պատվիրակների կազմը համալրվում է 2 տարին 1 անգամ կազմակերպվող ֆակուլտետների պատվիրակների ընտրության միջոցով: Պատվիրակներն ընտրվում են ֆակուլտետների յուրաքանչյուր կուրսից 1 պատվիրակ (25 և ավելի ուսանողներից բաղկացած կուրսերով առաջադրվել հետևյալ համամասնությամբ՝ 25 ուսանողից 1 պատվիրակ):
- 4.5. Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը: Բակալավրիատի առաջին կուրսում ընտրությունները կարող են անցկացվել միայն առաջին կուրսի երկրորդ կիսամյակում:
- 4.6. Պատվիրակ կարող են դառնալ այն ուսանողները, որոնց վերջին 2 կիսամյակի միջին գնահատականը 60 և ավելի միավոր է, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում են միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- 4.7. Ընտրությունը կատարվում է ըստ կուրսերի՝ ուսանողական ժողովներում: Ժողովը իրավագոր է, եթե ներկա են ուսանողների կեսից ավելին: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Եթե 2 անգամ հրավիրված ժողովին չի մասնակցում ուսանողների կեսից ավելին, ապա ընտրական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել և ընտրությունները

կազմակերպել ներկա ուսանողների մասնակցությամբ: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:

#### 4.8. Համագումարը՝

- 4.8.1. ընդունում է ՈւՄ-ի կանոնադրությունը, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ կատարում նրանում,
  - 4.8.2. լսում և հաստատում է ՈւՄ նախագահի տարեկան հաշվետվությունը,
  - 4.8.3. քննարկում և սահմանում է ՈւՄ-ի տարեկան գործունեության ծրագրերը և աշխատանքային պլանը,
  - 4.8.4. որոշում է կայացնում ՈւՄ-ի վերակազմավորման վերաբերյալ,
- 4.9. Համագումարը իրավագոր է, եթե ներկա է պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

### 5. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- 5.1. Ֆակուլտետի ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ուսանողների շահերը ներկայացնող մարմինը ֆակուլտետի Ուսանողական խորհուրդն է, որն ընտրվում է երկու տարի ժամկետով:
- 5.2. Ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը ձևավորվում է ֆակուլտետի ուսանողական ժողովում ուղղակի ընտրության միջոցով: Ֆակուլտետի ուսանողական ժողովի մասնակիցները ընտրվում են ֆակուլտետի կուրսերում:
- 5.3. Ֆակուլտետի ՈւՄ ընտրությունը համարվում է կայացած, եթե ներկա են պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները:
- 5.4. Ֆակուլտետի ՈւՄ-ն բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է ֆակուլտետի ՈւՄ նախագահ, տեղակալ, քարտուղար, ովքեր հաշվետու են ֆակուլտետի ՈւՄ-ին և ԳՊՄԻ ՈւՄ -ին:
- 5.5. Ֆակուլտետային ՈւՄ նախագահը և քարտուղարը վայր են դնում իրենց լիազորությունները ֆակուլտետային ՈւՄ-ի կամ ԳՊՄԻ ՈւՄ-ի որոշմամբ:
- 5.6. Ֆակուլտետի ՈւՄ-ն նիստ է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ, արտահերթ նիստ գումարվում է ֆակուլտետի ՈւՄ նախագահի, ՈւՄ անդամների 1/2-ի պահանջով կամ ԳՊՄԻ ՈւՄ որոշմամբ: Նիստն իրավագոր է, եթե նրան մասնակցում են ֆակուլտետային ՈւՄ անդամների կեսից ավելին, որոշումներն ընդունվում են ներկաների թվի ձայների պարզ մեծամասնությամբ:
- 5.7. Ֆակուլտետի ՈւՄ-ն կազմակերպում է ֆակուլտետի ՈւՄ-ի աշխատանքները՝ ինստիտուտի ՈւՄ-ի նպատակներին և գործունեության հիմնադրույթներին համապատասխան:

5.8. Սույն կանոնադրությամբ չնախատեսված դեպքերում ֆակուլտետի ՈւԽ-ն գործում է ԳՊՄԻ ՈւԽ -ի որոշումների համաձայն:

## 6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 6.1. Ընտրական հանձնաժողովը ներկայացուցչական մարմին է, որը ձևավորվում է թվով 9 հոգուց, որոնցից 5-ը ներկայացվում են ԳՊՄԻ-ի ՈՒԽ -ի, 2-ը՝ ԳՊՄԻ ռեկտորատի, 1-ը՝ արհկոմի և 1-ը՝ Ուսանողական գիտական ընկերության կողմից:
- 6.2. Ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարն ընտրվում են հանձնաժողովի կազմից՝ ընտրական հանձնաժողովի առաջին նիստում:
- 6.3. Ընտրական հանձնաժողովը՝
- 6.3.1. հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
  - 6.3.2. կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
  - 6.3.3. անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում ընտրություններում ներկայացուցչական համամասնության վերաբերյալ (ընտրությունների կազմակերպում ըստ կուրսի, հոսքերի և այլն),
  - 6.3.4. ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքները,
  - 6.3.5. եռօրյա աշխատանքային ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները: Ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին,
  - 6.3.6. ԳՊՄԻ-ի ուսանողական համագումարի պատվիրակների ընտրություններից հետո հրավիրում և կազմակերպում է ԳՊՄԻ-ի ուսանողական Համագումար:
- 6.4. Ընտրական հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել ֆակուլտետային ՈՒԽ-ի անդամ, ՈՒԽ Համագումարի պատվիրակ:
- 6.6 Ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

## 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

7.1 Ուսանողական խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են ԳՊՄԻ հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ԳՊՄԻ

Կանոնադրությանը, սույն Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: